Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
հաշվիչ հանձնաժողովի

ՈՐՈՇՈՒՄ N Լ-1-Ա

««ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕՐ» ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

25.04.2015թ. ք.Երևան, Զաքիյան 2

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) հաշվիչ հանձնաժողովը,

հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 9.1 հոդվածի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 7.11 կետի և 15.25 կետի 7-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 2013 թվականի փետրվարի 22-ի № 5/1-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի քվեարկության արդյունքների ամփոփման կարգի» 33-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջները,

հաշվի առնելով 25.04.2013թ. տեղի ունեցած ««Փաստաբանի օր» սահմանելու հարցը քննարկելու մասին» օրակարգային հարցով քվեարկության արդյունքների ամփոփման մասին Պալատի հաշվիչ հանձնաժողովի թիվ 2-Լ արձանագրությունը, միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. ««Փաստաբանի օր» սահմանելու հարցը քննարկելու մասին» օրակարգային հարցով քվեարկությունը ճանաչել չկայացած՝ ընդհանուր ժողովի իրավազոր չլինելու (քվորումի բացակայության) հիմքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝	*Ապետնակ Պողոսյան*
Հաշվիչ հանձնաժողովի քարտուղար՝	*Իրինա Փիլոյան*
Հաշվիչ հանձնաժողովի անդամ՝	*Գևորգ Դավթյան*
Հաշվիչ հանձնաժողովի անդամ՝	*Անահիտ Բեգլարյան*
Հաշվիչ հանձնաժողովի անդամ՝	*Ռոբերտ Մանվելյան*
Հաշվիչ հանձնաժողովի անդամ՝	*Սյուզաննա Գևորգյան*
Հաշվիչ հանձնաժողովի անդամ՝	*Մուրադ Ասրյան*
Հաշվիչ հանձնաժողովի անդամ՝	*Մերի Գևորգյան*
Հաշվիչ հանձնաժողովի անդամ՝	*Մնացական Սարգսյան*